

էին գնում չորս անգամ, Աստի որոշուեցաւ ընտրել վարչութեան չորս անգամ և Խօթը փոխանդամներ, Ընտրութիւնը կատարուեցաւ տոմարներէն ընդ և առաջարկուեցան 37 հոգի. որոնցից ձայնից բաղմութիւնը ստացան հետեւեալ անձինք 1) իշխ. Կատարինէ Բէհրութեան 35 ձայն. 2) տ. Կատարինէ Եւանդուկեան 34.—3) տ. Սօֆիա Բարայեան 34.—4) օր. Սօֆիա Փսարեան 28.—5) օր. Մարիամ Զիթախեան 27.—6) տիկ. Մարիամ Ծովիանեան 24.—7) օր. Մարիամ Մուծաֆեան 23.—8) տիկ. Վառփառէ Խարաղեան 19.—9) օր. Մարիամ Մատինեան 17.—10) օր. Կունէ Սալամբէկեան 17.—11) օր. Հուշանիկ Բայսողոյեան 16.—12) տիկ. Աննա Վորդանեան 16.—13) օր. Կունէ Բուզդանեան 16.—14) օր. Վառփառէ Միրիմանեան 13.—15) տիկ. Վառփառէ Լսայեան 12.—և 16) օր. Սօֆիա Անանեան 11 ձայն. Սոցանից իշխ. Բէհրութեան, տիկնայք Եւանդուկեան, Բարայեան և օր. Փսարեան հրատարակուեցան վարչութեան անգամ. իսկ փոխանդամներ—օր. Զիթախեան, տ. Ծովիանեան, օր. Մուծաֆեան, տ. Խարաղեան, օր. Բայսողոյեան, տ. Վորդանեան և օր. Բուզդանեան, Օրիորդք Մատինեան և Սալամբէկեանը հրաժարուեցան:

Ժամի 1/2 արժանապատիւ նախագահը գոցեց նիստը:

Վարչութեան Ատենագրիք Ա. Բիշմիշեան:

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

Ընորհակալութեամբ ստացանք

Ա. Բժ. Գ. Տէր Գրիգորեանցի Դոկտորութեան գիտնադաստի, տպեալ ընդ վերնագրովս

«Къ вопросу о влияніи обильнаго питья воды на азотистый обменъ и усвоен- азотитыхъ частой пищи»

Բ. Փունջ իմաստալի բանից ազգային մատենագրաց. խմբագրեաց Սարգիս քահանայ Մարտիրոսեան. տպագրեալ յօգուտ Ա. Բէհրորոսի եկեղեցւոյն նոր—նախիջեանի:

Գ. «Պարոք» հեղինակութիւն Սամուէլ Սմայլսի տետր տառջին թարգմ. Կիլիզայոս ԲաՏ. Բանակեանց, տպած է Պոստոփում. գինն է 35 կօպ:

Դ. «Ընդու արաղաղ» թարգ. հրատարակութիւն Մոսկուայի Հայ ուսանողների գրականական ընկերութեան. տպած Մոսկ. գինն է 10 կօպ:

Ընդու արաղաղը չորրորդ հրատարակութիւնն է Մոսկուայի Հայ ուսանողների որոնք իրանց պարապ ժամերը կամենալով օգտաւէտ գործի ծառայացնել հարստացնումն մեր գրականութիւնը ժողովրդին և մանուկներին մատչելի գրքոյներ հրատարակելով վայելուչ զիրքով և չափաւոր գնով:

Գովելով Մոսկուայի Հայ ուսանողների այս օգտաւէտ գործը, որ ամենայն քաջալերութեան արժանի է կը ցանկայինք որ ամենայն տեղերի ուսանողք այս մասին հետեւող լինէին Մոսկուայի ուսանողութեանը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ ՃԵՄԱՐԱՆԻ.

Հուշեցի Գպիր Կարապետ Տ. Գրիգորեան Իսկեանդարեանց 10 ր. նուիրեաց ճեմարանի Մայր Աթոռոյս և 5 բուբլի որոց և այրեաց հոգեորականաց և խոստանայ ցկեանս նուիրել ամ ըստ ամէ գնոյն գումար:

Մարգարէ Ա. ԲաՏ. Եյսկ քաղաքի 25 բուբլի:

Ժառանգք հանգուցեալ Գէորգայ Խոյեցեանց Պ. Սարգիս և Սիմէօն 50 բուբ. ընդ ձեռն հոգ. կառավարութեան Աղէքսանդրապօլու:

Յակոբ Բէգ Գ. Լալայեանց, Եգօր Բէգ Գ. Լալայեանց, Լեօն Բէգ Կ. Լալայեանց, Գրիգոր Մարտանեանց, Մարգար Տ Ասկանեանց, Մարտիրոս Ասկանեանց, Հայրապետ Կուզնեցեանց և Միքայէլ Հիսեանց հինգ հինգ ռուբ. Սօֆիա Մարգանեանց 1 ռուբ. ընդ ամենայն 46 ռ. ի ձեռն Խորէն Քահանայի Միրզաբէգեանց Բագուայ:

Ափխազիոյ երկրի Հարչուկայ գիւղացի Պ. Կարապետ Քաչապեանց նոյր. եաց յանուն Ճեմարանի 10 ռ. ի ձեռն Գրիգոր Քահանայի Տ. Աւետիքեանց:

(ՅԱՊՐԵԼ ԱՄՍՈՅ ՕՐԱԳՐՈԹԵԱՆՅ ՅԵՆՕԳԻ):

30. Ապրելի. Սինօզը նոր նախիջեանի հոգևոր կառավարութիւնից ի նպատակ Ս. Երուսաղէմայ տեղւոյն եկեղեցեաց զանձանակապետից 1885 թուի համար 97 ըրլ. 13 կօպէկ ստացած լինելով՝ որոշեց հրամանագրել զանձապետին Մայր Աթոռոյս փոստայի ծախքը դուրս գալուց յետոյ 96 ըրլ. 13 կօպէկն մուտք գրել աւանդապահութեան տօմարում և տեղեկուկութիւն տալով նոր-նախիջեանու հոգևոր կառավարութեանը, պատուիրել որ տեղւոյն եկեղեցեաց ձէջ Ս. Երուսաղէմայ անուամբ զանձանակ սահմանուի:

28 Ապրելի. Սինօզը Ագուլեցի հանգուցեալ մահտեսի Աւետիս Համբարձումեանի բարեգործական նպատակով կտակած 150 ըրլի. արժողութեամբ 1877 թուի արեւելեան փոխառութեան տոմսակները ստանալով յիշեալ հանգուցելոյ կտակահատարներէրց, որոշեց զնեկ Մայր Աթոռոյս զանձարանը յետ վաճառման շահեցողութեան՝ Ճեմարանի օգտին գործադրելու համար յայտնելով ի տեղեկութիւն կտակահատարաց:

28 Ապրելի. Սինօզը ներքին գործոց Պ. նախարարի գրութեան համեմատ առաջադրեց Ռուսաստանի ըլոր Պոնտիստորեաններին և Կարս ու Բաթում նահանգաց հոգևոր գործոց կառավարչին, որ բացի եկեղեցական և արքունական պատուանշաններից թոյլ չը տան ննջեցելոց յուղարկաւորութեանց ժամանակ պսակներ տանել և այլ աշխարհիկ ցոյցեր անել:

25 Ապրելի. Սինօզը Գեղ. Յովհաննէս եպիսկոպոս Տէր Յարութիւնեանցին ծերութեան պատճառով արձակեց Մայր Աթոռոյս հիւրընկալութեան պաշտօնից և ի տեղի նորա նշանակեց Արժ. Ղևոնդ վարդապետ Յովակիմեանին:

4 Ապրելի. Սինօզը Կ. Պօլսոյ Ամենապատիւ պատրիարքի գրութեան համեմատ շրջաբերական գրութեամբ պատուիրեց ըլոր վիճակային Կոնստ. տորեաններին իրանց թեմի ձէջ խստութեամբ որոնել Տարօնոյ Բուլանքը գաւառի Հեթի-Նազուպ գիւղի Յակովբ քահանայ Տէր Յակովբեանին և գտնելուց յետոյ պատշաճաւոր իշխանութեան ձեռքով յանձնել Կ. Պօլսոյ պատրիարքարանին, տեղեկագրելով նաև Սինօզին:

2 Ապրելի. Սինօզը արգէն տարւոյս Յունվարի 8-ին օրագրութեամբ Երևանայ Կոնստատորի առննադպիր աստիճանաւոր Աիմէօն Փիլիպպոսեանին նշանակած լինելով Սինօզի զիւանապահ հրաւիրեց ի նոյն պաշտօն. հրամայելով Երևանայ Կոնստատորին իւր նկատողութեան համեմատ առննադպիր կարգել մեծ և կամենայ: